

ԼՂՀ խորհրդարանական ընտրությունները կանցկացվեն մայիսի առաջին տասնօրյակում



ԼՂՀ խորհրդարանական հերթական ընտրությունները կանցկացվեն գալիք տարվա մայիս ամսվա առաջին տասնօրյակում: Այս մասին այսօր հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Սրբուհի Արզումանյանը:

ԿՀՀ նախագահն անդրադառնալով ընտրությունների անցկացմանը, ծանոթացրել է ընտրական նոր օրենսգրքի (կգործի հունվարի 1-ից) փոփոխություններին՝ կապված ընտրագրավի, նախընտրական հիմնադրամների, թեկնածուների գույքի եւ եկամուտների հայտարարագրման, խորհրդարան մտնելու շեմի եւ այլ հարցերի հետ:

Ի դեպ, ավելի վաղ խորհրդարանում որոշվել էր, որ համամասնական եւ մեծամասնական ընտրակարգով ընտրվողների մանդատների հարաբերակցությունը 22/11 պետք է լինի՝ գործող 17/16-ի փոխարեն: Խորհրդարան մտնելու համար նվազագույն շեմ է սահմանվել կուսակցությունների համար՝ 5, կուսակցությունների դաշինքի համար՝ 7 տոկոսը՝ գործող 6-ի եւ 8-ի փոխարեն: Փոփոխություն է մտցվել նաեւ համամասնական ընտրակարգով առաջադրվող կուսակցական ցուցակներում սեռերի հարաբերակցության մասով. նոր օրենսգրքով սկսած երկրորդ համարից յուրաքանչյուր հնգյակում սեռերի հարաբերակցությունը պետք է լինի 80/20:

Մեր այն հարցին, թե որքան գումար է նախատեսվում գալիք տարում նախատեսվող խորհրդարանական ընտրությունների անցկացման համար, Սրբուհի Արզումանյանը տեղեկացրել է, որ շուրջ 200 մլն դրամ է նախատեսվում ինչպես նշված, այնպես էլ 2015-ին նախատեսվող 200-ից ավելի համայնքներում ՏԻՄ ընտրությունների անցկացման եւ տեղամասային ընտրական հանձնաժողովների շուրջ 2500 պոստենցիալ անդամների ուսուցման համար:

ԿՀՀ նախագահի փոխանցմամբ՝ գալիք տարում 200-ից ավելի համայնքներում ՏԻՄ ընտրությունները կանցկացվեն մինչեւ օգոստոսի 18-ը:

<http://www.karabakh-open.info/hy/subjectam/9403-am5086>